ՍՏՐԱՍԲՈՒՐԳՅԱՆ ԲԱՆԱՎԵՃ

Վճիռը դեռ սկիզբն է. Ինչպես բարելավել ՄԻԵԴ-ի վճիռների կատարումը Հայաստանում

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, ՄԱՐՏԻ 4, 10.00-12.00
«Արմենիա Մարիոթ» հյուրանոց, «Թագուհի Էրատո» դահլիճ, Երևան, Ամիրյան փող. 1

Դարձնելով մարդու իրավունքները իրականություն. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների իրականացման խթանում

Հայաստանի Հանրապետությունը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան ստորագրած հպարտ պետություն է: ՀՀ քաղաքացիները կարող են դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ) Ստրասբուրգում, եթե համարում են, որ իրենց իրավունքները խախտվել են: Վերջերս տեղի ունեցած պատմանական իրադարձությունները ցույց են տալիս, որ ՄԻԵԴ-ի վճիռները Հայաստանի բարեփոխումների գլխավոր գործոններն են: Այնուամենայնիվ, այդ վճիռների՝ երկրում մարդու իրավունքների շոշափելի բարեփոխումների հանգեցնելու ներուժն ամբողջովին չի իրացվել. վերջին տասը տարվա ընթացքում Հայաստանի դեմ կայացված՝ ավելի ընդարձակ բարեփոխումներ պահանջող նոր, հաճախ համակարգային խնդիր սահմանող վճիռների մեծ մասը լիարժեք չի իրականացվել:

Արդյունքում՝

- ոստիկանության կողմից գործադրվող վատ վերաբերմունքը շարունակում է մնալ սովորական և հաճախ անպատիժ,
- ազատուցությունից զրկված անձանց հասանելի չէ պատշաճ բուժօգնությունը,
- *Մարտի մեկի* ժամանակ անօրինական ճանապարհով ձերբակալված կամ ազատազրկված խաղաղ ցուցարարները մինչ օրս արդարադատության չեն հասել:

Աջակցությունը՝

european implementation network

HELSINKI CITIZENS ASSEMBLY

OPEN SOCIETY FOUNDATIONS

«Վճիռների կատարման ճգնաժամի» լուծման ճանապարհ. Հայաստանի կառույցների և դաշինքների ամրապնդում

Անհրաժեշտ են գործադիր մարմնի, խորհրդարանականների, դատական իշխանության, քաղհասարակության դերակատարների և լրագրողների մասնակցությամբ համաձայնեցված ջանքեր՝ ապահովելու, որ ՄԻԵԴ-ի վճիռներն իսկապես հանգեցնեն արդարության: Այս հասարակական բանավեճը միավորում է ազգային և միջազգային փորձագետների՝ քննարկելու Հայաստանում մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ներկա մարտահրավերները, և թե ինչպես բազմանդամ դաշինքը կարող է խթանել Ստրասբուրգի դատարանի վճիռների իրականացումը:

SAVE THE DATE

Ողջույնի խոսք. ***Արթուր Սաքունց***, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ

Խոսնակներ

- ***Լիպարիտ Դրմեյան***, ՀՀ վարչապետի աշխատակազմ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի գրասենյակի ղեկավար
- ***Գոհար Սիմոնյան***, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ, խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչության պետ
- ***Սերժիկ Ավետսիսյան, ՀՀ վճռաբեկ դատարան, դատավոր***
- ***Զարուհի Մեժլումյան***, փաստաբան
- ***Մարիամ Անտոնյան***, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Իրավական վերլուծությունների և նախաձեռնությունների ծրագրերի համակարգող

Մոդերատոր՝ պրոֆեսոր ***Ֆիլիպ Լիչ***, European Implementation Network, փոխնախագահ

SAVE THE DATE